

Եւ Յորդանանու ալիք դառնակոծ  
Շամբերուն տակէն սողոսկին իբր օձ.. .  
Եւ մայրըն դառնայր 'ի տուն մենաւոր  
Խաչին տակ թողած ըզսիրտ վիրաւոր:  
Եւ անուշ անմեղ վըշտահար հողին  
Գընայր գըլիսիկոր յանընկեր ուղին,  
Երբեմն յիշելով կենայր ակամայ  
Դարձընէր նայուածքն 'ի բլուր Դաղգոթայ....

### ԹՈՎՄԱՍ ԹԵՐՁԵԱՆ

#### ՎԵՊԻ ԵՒ ԶՐՈՅՑՔ

Խշան մը կ'ըսէր. Ամենէն քիչ ձանձրանալի  
ունկնդրութիւն՝ զինուորաց կ'ըլլայ. որովհետև  
ասոնք աւելի ձեռք գործածելու վարժ ըլլալով  
քան լեզու, երկու խօսքով կ'ըսէն ուղածնին.  
Խսկ պալատականք և գիտնականք՝ այնչափ յա-  
ռաջաբանութեամբք, դարձուածներով և քաղա-  
քավարական խօսքերով կ'երկընցընեն ըսածնին,  
որ երբ բուն ուղածնին ըսելու կարգը գայ՝ գու-  
լսէլէն ձանձրացեալ կ'ըլլաս:

Երբ Հռովմայեցիք զՎալենտիանոս կայսր ընտ-  
րեցին՝ ուղեցին իրեն օգնական մ'ալ կարգել. այն  
ատեն ըսաւ Վալենտ. Զօրականք, զիս կայսր ընտ-  
րելն՝ ձեր ձեռքն էր, հիմայ ինծի կ'ինկնայ կա-  
ռավարելն և ընտրելն:

Երբ Կարոլոս Ե. Սպանիոյ և Գերմանիոյ կայսրն՝  
Փրանկաց հետ պատերազմելով յաղթեց, Վենեա-  
կեցիք՝ որ աւելի այս ետքիններուն բարեկամ էին,  
դեսպան մը խաւրեցին առ Կարոլոս՝ որ իրենց Հա-  
սարակապետութեան ըրածներն արդարացընէ՝  
այն առթին մէջ: Կարոլոս լսելէն ետև՝ դարձաւ  
իր քովիններուն ըսաւ. Ադոր ըրած չքմեզանքը  
սուտ է, բայց ես կ'ուզեմ իրաւ համարիլ. (որ-  
պէս զի նոր կոիւ մ'ալ չըլլայ):

Ալփոնս Ա. Նարոլիի թագաւորն շատ հեղ կ'ը-  
սէր. Ծակ ու շրտկուէ: Ուղարին սովորութիւնը  
կ'ուզէր յիշեցընել. որ կը ծռի կը ցածնայ բեռը  
ընդունելու համար. և երբ որ իր ուժն բաւա-  
կան սեպէ՝ կ'ելնէ կը շրտկուի:

Տարտամութիւնն աւելի գէշէ քսոն գէշ որոշո-  
ղութիւն կամ խորհուրդ մը. վասն զի այս կըրնայ  
փոխուիլ կամ ուղղուիլ, խսկ այն կ'աւրէ զգործը  
կամ բոլորովին կ'անպիտանացընէ:

Կարոլոս Բ. Փրանկաց թագաւորն մեծ բահա-  
կով մը մտաւ՝ ի Ֆիրենցէ, և ծանր ծանր պայման-  
ներ կը պահանջէր քաղաքացիներէն: Ասոնց նուի-  
րակաց մէկն՝ Պաբրոնի, թագաւորին քարտու-  
ղարին ձեռքէն խլեց պայմանաց թուղթը և պա-  
տըռտելով ըսաւ. Եթէ գուք այսպիսի անվայել  
բաներ պիտի պահանջէք՝ սկըսէք ձեր փողերը հըն-  
չեցընել, մէնք ալ երթանք մեր զանդակները գան-  
չեցընենք: Եւ դարձաւ երթալու. Փրանկք զիջան  
օրինաւոր պայմանաց:

Դժուարին գործերը իբրև գիւրին համարելու  
է, գիւրինները՝ իբրև դժուարին գործելու. որ-  
պէս զի գիւրինք զմեզ չանհոգացընէն, դժուարինք՝  
չվհատեցընեն:

Թագաւոր մը հարցուց խորհրդականին. ի՞նչպէս  
վարուիմ որ երջանիկ ըլլամ: — Այդ բանդ ան-  
կարելի է, պատասխանեց, այս աշխարհիս մէջ: —  
Ուրեմն ի՞նչպէս ընեմ՝ որ գոնէ հանդերձելոյն մէջ  
երջանիկ ըլլամ: — Այնպէս վարուէ՝ որպէս թէ  
մահացու հիւանդ ըլլայիր:

Տղայութեանն ատեն Կարոլոս Ե. մեծահանդէս  
տեսարանի մը մէջ գտուելով, և տեսնելով շատ  
առաքետներ չքեղ հագուած և զարդարուած, հար-  
ցուց ծեր պաշտօնէի մը, որ իր պապուն ատենէն  
յարբունիս էր՝ թէ ով են: Չեմ գիտեր, ըսաւ  
ծերն, և ոչ ալ անունին: — Կ'երևի որ, ըսաւ  
Կարոլոս, գու աւելի քու գործոցդ մտադիր ես՝  
քան ուրիշներուն:

Քան զայն մեծագոյն նենդութիւն չկայ, կ'ըսէ  
Քսենոփոն, ինչպէս առանց յարմարութիւն ու-  
նենալու ուղել տեսուչ ու վարիչ ըլլալ մարդկու-  
թեան: